ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<03>> **հունիսի 2014 թվականի N:** 22 **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 07 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգի>> 4-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալի 2014 թվականի մայիսի 26-ի թիվ ՖԲ/9/3167-14 գրությունը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողովի կազմում Արմենակ Մարտիրոսյանի փոխարեն ընդգրկել Մկրտիչ Կարապետյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի փետրվարի 10-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2006 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 122 կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 07 կարգադրության հավելվածում <<Արմենակ Մարտիրոսյան>> բառերը փոխարինել <<Մկրտիչ Կարապետյան>> բառերով:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է